


# ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

Առաջադրանքների լուծման համար տրվում է **75** րոպե

**5-6**-րդ դասարաններ

- Յուրաքանչյուր առաջադրանքի համար տրված պատասխաններից ճիշտ է միայն մեկը:
- Չլուծված առաջադրանքի համար միավորներ չեն գումարվում և չեն հանվում:
- Մրցույթի մասնակիցը կարող է վաստակել առավելագույնը 120 միավոր:
- Մրցույթի ավարտին առաջադրանքների թերթիկը մնում է մասնակցի մոտ:
- Մրցույթի մասնակիցներին և կազմակերպիչներին ներկայացվող գլխավոր պահանջը առաջադրանքները ինքնուրույն և ազնիվ կատարելն է:

### 3 միավոր գնահատվող առաջադրանքներ

1. Ըստ ասացվածքի՝ «Քանի լեզու գիտես, այնքան \_\_\_\_\_ ես»:  
 Ա. գիտուն    Բ. գրագետ    Գ. մարդ    Դ. ճանաչված    Ե. զարգացած
2. Ո՞ր ձայնավորը տեղադրենք բաց թողնված տեղերում, որ կազմվի բառ (տե՛ս նկարը):  
 Ա. ո    Բ. ա    Գ. ու    Դ. ի    Ե. է  

3. Տրված բառերից ո՞րը, **իկ** ստանալով, փոքրացուցիչ-փաղաքշական իմաստ չի արտահայտի:  
 Ա. ուլ    Բ. գունդ    Գ. մարդ    Դ. շուն    Ե. բաղ
4. Լավ լուր հաղորդողը մեկ բառով կլինի՝  
 Ա. գուժկան    Բ. բոթաբեր    Գ. նվիրական    Դ. բարեբեր    Ե. ավետաբեր
5. Ո՞ր բառն է շարքում «ավելորդ»:  
 Ա. հորանջել    Բ. փայլել    Գ. քայլել    Դ. խորովել    Ե. հորովել
6. Արան վերցրեց սղոց, տախտակ, Թավշյա կտոր, մուրճ ու մեխ, Որոշեց, չափեց ու կտրեց, Ռանդայով էլ աշխատեց:  
 Ի՞նչ պատրաստեց Արան:  
 Ա. սեղան    Բ. լուսամուտ    Գ. դուռ    Դ. աթոռ    Ե. շրջանակ
7. Առաջին տողն ունի հետաքրքիր օրինաչափություն: Եթե այն գտնես, կլրացնես երկրորդ տողը:  
 ԱՐՎԵՍ (ՏՆԿ) ԿՈՐՅՈՒՆ  
 ԱՐԱԳԻԼ ( . . . ) ՊԱՏԳԱՄ

- Ա. լամպ    Բ. լույս    Գ. կերպ    Դ. գրամ    Ե. իլիկ
8. **Դուր, սար, ծառ, հուր, կուտ** բառերից քանիստ՞ում ձայնավորի փոփոխությամբ կարող ենք դարձյալ գոյական կազմել:  
 Ա. մեկում    Բ. երկուսում    Գ. երեքում    Դ. չորսում    Ե. հինգում
  9. Ո՞ր բառում վարդը չի «բուրում»:  
 Ա. վարդաստան    Բ. վարդենի    Գ. վարդաջուր  
 Դ. վարդակ    Ե. վարդաթուփ
  10. Ի՞նչ է գրված **ՊԷ** նկարելուկով:  
 Ա. դրմիկ    Բ. դարդ    Գ. դրում    Դ. դուրուկ    Ե. դադար
- ### 4 միավոր գնահատվող առաջադրանքներ
11. Ո՞ր բառում է կենդանիներից կամ թռչուններից մեկի ձագը թաքնված:  
 Ա. կայծ    Բ. ցուլ    Գ. հավատ    Դ. վրձին    Ե. դեզ
  12. Ի՞նչ է գրված ՈԻՈԻՈԻՈԻ նկարելուկով:  
 Ա. ուռա    Բ. ուրախություն    Գ. չորսու    Դ. երեքնուկ    Ե. ուրվական
  13. Նշված մրգերից վեցը կապված են ինչ-որ օրինաչափությամբ: Ո՞ր միրգն է «երկար մտածել» և դուրս եկել օրինաչափությունից:  
**մանդարին, սերկնիկ, դեղձ, բանան, նարինջ, խնձոր, ծիրան**  
 Ա. մանդարին    Բ. ծիրան    Գ. բանան    Դ. խնձոր    Ե. դեղձ
  14. Ի՞նչ նախադասություն է գաղտնագրված. **այբնուինիտյունունուայբբեինի:**  
 Ա. Անուշավանը տղա է բարի:    Բ. Անուշը բացակա է:  
 Գ. Այբբենարանի հանդես է:    Դ. Անի, տուն արի:    Ե. Աղբյուրը ցամաքել է:
  15. Ամբողջացնել առածը. «Պտղատու ծառի ճյուղերը \_\_\_\_\_»:  
 Ա. գույնզգույն կլինեն    Բ. տերևազուրկ կլինեն    Գ. կռացած կլինեն  
 Դ. կտրված կլինեն    Ե. չորացած կլինեն
  16. Քույրիկս զգեստ կարելու համար օգտագործեց նախատեսվածից շատ՝  
 Ա. դեղձան    Բ. դերձան    Գ. դերձակ    Դ. դեղձանիկ    Ե. դեղձ
  17. **Գիսանե, հասմիկ, նարգիզ, նունուֆար, շուշան** բառերից ո՞րն է «սխալմամբ» հայտնվել շարքում:  
 Ա. գիսանեն    Բ. հասմիկը    Գ. նարգիզը    Դ. նունուֆարը    Ե. շուշանը


18. Նշվածներից ո՞ր գույգը կապ չունի մյուսների հետ:

- Ա. Բեկնազարյան-Նազարբեկյան
- Բ. Ամիրգուլյան-Գուլամիրյան
- Գ. Բաբախանյան-Խանաբաբյան
- Դ. Խանփերյան-Փերխանյան
- Ե. Մելիքսեթյան-Մելիքխանյան

19. Մի ծառ կա՝ տասներկու ճյուղ ունի, ամեն ճյուղին երեսուն խնձոր կա, ամեն խնձորի կետը սև է, կետը՝ սպիտակ: (Ժողովրդական հանելուկ)

- Ա. խնձորենի
- Բ. գիշեր
- Գ. թթենի
- Դ. տարի
- Ե. ամիս

20. Ի՞նչ բառ պետք է գրել մեղվիկի փոխարեն:

հրեա, խումբ, զանգ, վարդ, բազե, 

- Ա. թուղթ
- Բ. հունձ
- Գ. գորտ
- Դ. մարգ
- Ե. զարմ

**5 միավոր գնահատվող առաջադրանքներ**

21. Ի՞նչ է գրված ՄՄ նկարելուկով:

- Ա. սեր
- Բ. սար
- Գ. սուր
- Դ. սուսեր
- Ե. սաստիկ


22. Ո՞ր տարբերակում են **սխալ** և **գույն** բառերը գույգ կազմել:

- Ա. բյուր-բույր
- Բ. հյուս-հույս
- Գ. թյուր-թույր
- Դ. սյուն-սույն
- Ե. յար-այր

23. Պատասխանների տարբերակներից որո՞ւմ հարցական բառ չէս կարող գտնել:

- Ա. կով
- Բ. ոչինչ
- Գ. լուծում
- Դ. ներբան
- Ե. թաս

24. Եթե տեսնես ստորև բերված բառաշարի օրինաչափությունը, կգտնես, թե ինչ բառ է թաքնված մեղվիկի տեղում:

եջ, շիշ, կրակ, պարտք, մկրտում, 


- Ա. մկրտիչ
- Բ. կտրվածք
- Գ. կարծիք
- Դ. սրթսրթալ
- Ե. մկրտություն

25. **Նաիրանուշադիրվարքովամենքինհոգնեցրեց:**

Իրականում սա նախադասություն է, բայց բառերը կպած են իրար: Ի՞նչ նախադասություն կստացվի, երբ առանձնացնես նրա մասերը:

- Ա. Նաիրա՛, նուշը դիր վա՛ր. ո՞վ ամենքի հոգնությունը ցրեց:
- Բ. Նա Իրանի նուշը դրեց վար և ամենքին հոգնեցրեց:
- Գ. Նա իր անուշադիր վարքով ամենքին հոգնեցրեց:
- Դ. Նայի ը ուշադիր նրա վարքին, որովհետև ամենքին հոգնեցրեց:
- Ե. Նաիրա՛, անո՛ւշ արա ու դի՛ր վար՝ քովս. նա ամենքի հոգսը ցրեց:

26. Եթե տեսնես ստորև բերված բառաշարի օրինաչափությունը, կգտնես, թե ինչ բառ է թաքնված մեղվիկի տեղում:

պատվար, վարպետ, պետական, կանգուն, գունանկար, կարկուտ, 

- Ա. կակտուս
- Բ. կուժկոտրուկ
- Գ. գունավորում
- Դ. կուտակում
- Ե. կատակ

27. Ո՞ր նախադասության ընդգծված բառը «հարազատ» չէ մյուս ընդգծվածներին:

- Ա. Այդ մասին ոչ ոք չգիտեր:
- Բ. Մեքենայի այդ մասին ես ծանոթ չեի:
- Գ. Գրքի մասին ես իմ կարծիքն ունեմ:
- Դ. Նա ջերմ խոսքեր ասաց քո մասին:
- Ե. Այդ ամենի մասին ես վաղուց գիտեի:

28. Աջ կողմում բերված է տառաթվային ծածկագիր, որում յուրաքանչյուր տառին համապատասխանում է մեկ թվանշան: Նույն տառերին համապատասխանում են նույն թվանշանները: Բերված տարբերակներից ո՞րն է համապատասխանում այդ տառաթվային ծածկագրին:

ՄԵՂՈԻ  
+  
ՄԵՂՈԻ  
ՓԵԹԱԿ

Ա. 7239	Բ. 6239	Գ. 9239	Դ. 6748	Ե. 6231
+	+	+	+	+
<u>7239</u>	<u>6239</u>	<u>9239</u>	<u>6748</u>	<u>6231</u>
14478	12478	18478	13496	12462

29. Այս կողմը՝ սար, այն կողմը՝ սար, մեջն՝ անդադար: (Ժողովրդական հանելուկ)

- Ա. քամի
- Բ. քարափ
- Գ. գետ
- Դ. անտառ
- Ե. ավիք

30. Ստորև բերված ո՞ր դարձվածք(ներ)ով կարելի է բնորոշել շատ արագ փախչող նապաստակին:

1. Ականջները չորս է արել:
2. Չորս ոտք ունի, չորսն էլ փոխ է առել:
3. Գլուխը կրակն է գցել:
4. Գլխապատառ սլանում է:
5. Աչքերի մեկը հազար է արել:

- Ա. 2
- Բ. 4
- Գ. 2, 4
- Դ. 2, 4, 5
- Ե. 3, 5